

891.71

4-79

3781

Ундуч-ирнелу 12

Сог-Ванш
фру

1439

Ранг-м
1912

2011

2003

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

2 рассказы.

Պրոս. Բարդ. ԱՐՄԵՆ-ՍՅՈՒՆԻ
ПЕР. С РУС. АРМЭН-СЮНИ

(На пороходъ — И. Кондурушкина.)
(Подпись — А. Баранова)

Գրքն է 8 Կրու.

Բազմ., տպար. Ն. Երևանցիանի.
Баку, тип. Н. А. Эриванцова.
1912

Հ. Բ. Մ.
2-1032a

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

2 рассказы.

Ռուս. թարգ. ԱՐՄԷՆ-ՍՅՈՒՆԻ
ПЕР. С РУС. АРМЕН-СЮНИ

891 71

4-79

3837


Բազում, տպար. Ն. Երևանցեանի.
Баку, тип. Н. А. Эриванцова.

1912

I.

ՀՈԳԵՆԱԻ ՎՐԱՅ

45048. uel.



29326-63 9-

ՇՈՓԵՆԱԻԻ ՎՐԱՅ

Գետային շոգենաւի յետեի կողմը թափուած էին յատակին չորրորդ կարգի ճանապարհորդները: Մի ինչ որ գիւղացի բարկացած գոռում ու հայհոյում էր իր կողքին նստած երեխային:

Երեխան լուռ ու անշարժ հայացքը յարել էր դետնին, նրա ամբողջ փոքրիկ վտիտ մարմինը երկշոտութիւնից կուչ էր եկել, իսկ հիւանդոտ գունատ դէմքը ջղայնաբար ցնցւում էր:

Երբեմն աղերսանքով նայում էր շրջապատողներին ու իսկոյն վախկոտ հայացքը դարձնում էր իր կողքին նստած գիւղացու վրայ:

Վերջինը չէր դադարում հայհոյելը, ի վերջոյ երեխայի լռութիւնը հասցրեց նրան բարկութեան գագաթնակէտին, բռնեց նրա նօսր մազերից ու ցածրացնելով սկսեց գլուխը խփել տախտակամածին: Երեխան բնկաւ երեսն ի վայր ու ճչաց թոյլ աղիողորմ ձայնով:

Ճանապարհորդներից մէկը չկարողանալով տանել այդ, բարձրացաւ տեղից, բռնեց գիւղացու ձեռքից:

— Թո՛ղ... Աստծոյ սիրուն, թո՛ղ, ի՞նչու ես երեխային բռնաբարում: Թող խնդրում եմ. Աստուածը չես մոռացել:

— Իսկ եթէ նա, լակօտը, արժանի է դրան, որ սպանել նոյն իսկ քիչ է. Ը-ը, օձի!... ու գիւղացին նորից ձգուեց դէպի երեխան:

— Թող!... Աստծու սիրուն, բարի մարդ ուշքի արի! եթէ չեմ սխալուում զաւակդ է:

— Զաւակ, օձի ձագ է թէկուզ հէնց տեղնուտեղը պայթւի!

Այս Աստուած իմ! Խաչակնքիր մէկ! Երևի չար հոգին քո մէջ է մտել!

— Մի վախի, սատանի ձագին ծեծելով չես սպանի. չծեծես այդ դէպքում աւաղակապէտ դուրս կգայ:

Այս բարի մարդ! Դէհ, եթէ կաղ կամ ապուշ մեծանայ քեզ համար լաւ կլինի:

— Այսը ի՞նչպէս չծեծել, քանի անգամ էս շանը ասել եմ մի դիպչի իմ գործիքներին!... չէ, ասած— չասած!

— Է՛հ, գործիքներ... Ուրեմն նշանակում է գործիքներդ քեզ համար աւելի թանգ արժէ քան կենդանի մարդը, նոյն իսկ հարազատ որդիւն: Է՛ միթէ դու կարող ես այս տարիներում ծեծելով երեխային սանձահարել:

Կգայ ժամանակ, ինքն-ինքը կողողուի: Մի վախի դրա տարիքում մեզանից աւաղակապէտներ չեն դուրս գալիս: Իսկ քո ծեծը միայն նրա մէջ հոգին կը մեռցնի: Իմ հանդուցեալ հայրս էլ, Աստուած հոգին լուսաւորի հէնց այդպէս էր, բնաւ մի բան առանց հարցնելու չէիր կարող վերցնել: Վայ թէ ձեռքիս տեսնէր գործիք կամ մի որեւէ բան, ձեռքիցս կառնէր. թէկուզ հէնց կացին, լինէր կացին, մուրձ, լինէր մուրձ. ինչ ուզում է լինէր. կսկսէր հասցնել ինձ որտեղ պատահէր. և ինչպէս չի ծեծել! Վառարանով ու գետնով է խփել գլուխս, շատ անգամ էլ կէտ փայտով է ջարդել ինձ:

Յիմա էլ դեռ նրա կրթիւնը յետոյ ոչ մի կերպ չեմ կարողանում ուղղուել: Այնուամենայնիւ, եթէ մի բան ուզում ես անել, կարծես քեզ քաշում է դէպի իրան ու մոռանում ես կրածդ տանջանքները, մահուան ծեծը ու էլի յետ չես մնում, ա՛րում ես ինչ որ սիրտդ ուզում է... բայց յետոյ երբ արդէն ուշքի ես գալիս, մարմինդ սարսուռ է: Պատահում էր, կանչում էր ինձ իր մօտ, իսկ յետևին ձեռքերում բռնած ունի կաշուէ փոկը: Ես գնում եմ, գնում եմ, ամբողջ մարմնով դողում, լաց եմ լինում ու գոռում: Յուրտ մահը ներս է սողում սրտիս մէջ, մազերս փշաքաղում են, մարմինս սարսուռ է, ոտ ու ձեռքս սարսափից չէին շարժւում, բայց գնում եմ մօտը: ձեռքերս պարզում եմ նրան ու պաղատում աղաչում եմ. հայրիկ, սիրելիս, չեմ անի! Աստծու սիրուն, աղաւնեակս, չեմ անի! Իսկ նա կանգնած ինձ է սպասում:

Մէկ անգամ գողտուկ վերցրի սղոցը ու պատահմամբ ատամներից կոտրեցի: Յետոյ երբ յիշեցի, որ դրա համար ինձ կհասնի, վաղեցի դէպի գետակը ու գցեցի ինձ ջուրը: Մարդիկ ինձ դուրս հանեցին:

Իսկ հայրս այն դէպքից յետոյ էլ դարձեալ չներեց, ինձ վրայ թանգ նստեցրեց:

Ոչ թէ միայն ծեծը այլ և վիրաւորանքը երկար յիշում է մանկական հոգին, նամանաւանդ երբ նրանք մանկութեան արկածներով լի են:

Շատ երկար ժամանակ կյիշեմ մի դէպք:— Զմեռ էր հօրս հետ գալիս էինք հարեան գիւղից տուն: Դիշեր էր: Կատաղի ու ցուրտ քամի էր, հագիս կար մի հնամաշ չուխայ ու պատրտուած տրեխներ ոտներիս: Կծկուած նստած եմ սահնակում, ատամս-ատամիս չէր կաշւում, ցրտից ուղղակի շունչ է կտրվում: Ոտ ու ձեռքս ստուկ ջարդւում էին, սիրտս էլ մի կողմից էր ցաւում: Տեղումս անշարժացել եմ, ուզում եմ լալ, բայց վախենում եմ թէ ծեծի:

Ահա և մեր գիւղը, շուտով վառարան կբարձրանամ ինքս ինձ մխիթարում էի: Մէկ էլ տեսնեմ հայրս ճանապարհը ուղղեց դէպի մարագը դարման վերցնելու: Մարագում ինձ ստիպեց մերկ ձեռքերով սառած դարմանը դուրս քաշել: Վերջացրինք:

Հէնց էնէ ուզում էի նստել սահնակը, չուխիս փեղը ինչպէս է լինում խանգարեց ու վայր ընկայ ձիւնի մէջ և ահա ոչ այս, ոչ այն, նոյնիսկ ցաւալի է յիշել Կողքիս մի քանի հարուածներ հասցրեց ոտքով, ինքը նստեց գնաց իսկ ինձ թողեց մարագի մօտ:

Դու կարող ես երևակայել դրութիւնս, թէ ինչ կերպ տուն հասայ մարագից: Այո շատ դժւար էր: Բայց յետոյ կարծես թէ բան չէ եղել, միայն զգում էի անտեղի վերաւորանք:

Ընդամենը եօթը տարեկան էի, եօթը տարեկան հասակում ես արդէն սկսել էի հօրս ատել: Անմիտ տղայ էի, ինչպիսի չարածիճիութիւն ուզեցի անել: Ասեցի պառկեմ հէնց այստեղ ձիւնի մէջ ու սառչեմ, որպէսզի նրան բանտ նստեցնէին: Այդ բոլորին որքան դժուար էր թւում փոքրիկ սրտիկիս, ինձ արդէն որբ էի զգում... կասէին, հարազատ որդուն ուզեցել է մեռցնել... բժ. և նայեցի եղբայր իմ—դէպի երկինք, այնտեղ է իմ միակ պաշտպանը, նրան կղիմեմ: Ես ընկալ փոքրիկ թաթիկներով սառած ձիւնի վրայ: Լաց էի լինում ու աղօթք անում... ինչպէս էի աղօթում! և ինչպէս էի հաւատացած!...

Իսկ նա չպատասխանեց... Այո ինչ էի ես, այնպէս փոքր, անպէտք, որ նոյնիսկ ծնող հօրս էլ էի աւելորդ, որը ինձ աշխարհ էր բերել:

Միայն մայրս էր, որ տաքացնում էր ձեռքերս իր տանջուած, փշրուած կրծքին և թոյլ չէր տալիս փոքրիկ սրտիս վրդովուելու:

Օհ-օհ-օհ ծանր են մեր մեղքերը,—հառաչեցին և լսողները ցաւակցութեամբ:

Խօսակիցը մի քանի բոլէ լռեց, ու յետոյ կամացուկ սկսեց քթի տակ ինչ որ մի երգ մոմաւ...

Շուգենաւը սուրեց իր ողջոյնը ու ընթացքը դանդաղեցրեց: Տախտակամածի վրայ սկեցին վազվզել նաւաստիները:

Երգիչը վեր կացաւ, վերցրեց յատակից իր փոքրիկ կապոցը:—Դէ մնաս բարե սիրելի մարդ, ներիւր Աստուծո սիրուն, եթէ մի որեւէ բանով վերաւորեցի: Մնաս բարե, փոքրիկս!

— Աստուած կների. ներիւր մեզ, Աստուծո սիրուն. Մռայլ ու հանգարտ պատասխանեց գիւղացին:

Իվան Կօնյուրուշկին

II.

ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

— Հայրիկ, դու խօստացար ինձ համար տիկնիկ
առնել!—Թոթովում էր ճաշի ժամանակ, հինգ ամիսյ
զանգուերիկ մազերով ու սիրունիկ աչքերով Զինոչկան:

— Կառնեմ, կառնեմ—անուշադիր կերպով ասեց
Նիկոլայ Իվանովիչը, կուլ տալով մեքենայաբար սուպը:

Նա հէնց նոր էր վերադարձել զեմսավոյի կա-
ռավարութիւնից, որտեղ վարում էր ստատիստիկի
պաշտօն, այդ օրը նա մի ինչ որ բանով խորասուզ-
ւած էր:

— Ինձ համար էլ ձի առ—հպարտ յայտարարեց
չորս տարեկան Սօնեան:

— Հա, հա քեզ համար էլ ձի—ասեց հայրը:

— Իսկ ինձ փող է հարկաւոր! յայտնեց և կինը,
երբ մատուցանեցին տապակած միս: Մսավաճառը
պահանջել է... շատ ենք արդէն վերցրել...

— Ձեռքիս այժմ չունիմ! փնթփնթաց Նիկոլայ
Իվանովիչը, յայտեցը յառած ափսէին:

— Ի՞նչպէս անել: Խստիւ պահանջեց... ինքդ էլ
զիտես, որ նա ուրբան կոպիտ է... Ձէր կարելի ար-
դեօք, որ օր առաջ վերցնէիր ոռճիկդ:

— Ռոճիկ, ոռճիկ!—գրգռուած կրկնեց նա:— Էդ է
էլի միակ յոյսը!... Տիպիկ քսանականներ... ծառայում
ես, ծառայում, իսկ սե օրուայ համար ոչինչ չունիս

յետ դցած... Թնչ պիտի անենք մենք, եթէ նորից ինձ հեռացնեն պաշտօնից:

— Ոչ, ես սա ասում եմ հէնց այնպէս օրինակի համար... Թնչ կայ որ միթէ քիչ է պատահում այդպիսի դէպքեր: Զօրօրինակ, այսօր հրաման է եկել... մենք պէտք է ստորագրութիւն տանք...

Կնոջ դէմքը, որը պատած էր, քաշած հոգսերի կնճիռներով, սկսեց աւելի ու աւելի այլալուեի և կընձռուել... Օ՛, նա գիտէ, թէ ինչ է նշանակում այդ «հրամանները» ամուսնու մոայլ գիւրագրգռութիւնը, նրա հուզիչ ակնարկները.— Օ՛, քանի-քանի անգամ նա ականատէս է եղել անհելի դէպքերի և որի մօտեանալուն նա զգում է և յիմա հէնց ամուսնու խօսքերից...

— Դէհ, Թնչ ես ինձ այդպէս նայում.— յուզուեց դարձեալ Նիկօլայ Իվանովիչը, հասկանալով որ ինչ է կատարւում նրա մէջ.— Ոչինչ չեղած վախեցար արդէն: Ստորագրութիւն... հասկանում ես... պարտականութիւն է, որ արդեօք չենք պատկանում հակակառավարչական կուսակցութեանը... ահա յիացիր!

Նա հանեց ծոցից ու անհոգ կերպով շարտեց նրան տրորուած թուղտը:

Դու էլ... Ուրեմն ի՞նչ.— Անհանգիստ կերպով հարցրեց կինը, հարթելով թուղտը:

— Դէ իհարկէ, ուրախացար! որքան յիմար հարց...

— Ես ոչ թէ սրա համար... այլ նրա համար...

— Այո, այո ես ամեն ինչ հասկանում եմ. պէտք է ստորագրել, ձեռք քաշել հրկու ձեռքով, ընդգծել անձնական ստորութեան...

Երեխաները հանդարտուեցին ու զարմացած նայում էին հօրը:

— Հայրիկ, մի չարանա! — վստահ կերպով նկատեց Սօնեան:

— Այո, այո սիրելի զաւակս! իրաւ որ հարկաւոր չէ,— ժպտաց Նիկօլայ Իվանովիչը, զսպելով յուզմունքը:

Երեխաները հլան սեղանից:

Տիրեց ճնշող լռութիւն...

Կնոջ գլուխը իջեցրած էր, կարծես թէ շարունակում էր կարդալը:

— Ներիւր խնդրում եմ... Իհարկէ այդ քո գործն է... — անվստահ շանուեսակեց նա — Բայց չէ որ ճշմարիտ, դատարկ բան է: Ինչով կարող է պարտաւորեցուցիչ լինել այդ ստորագրութիւնը: Ձեռն էլ հասարակ է...

— Այո ինչպէս չէ! Այսօր քեզ կստիպեն ստորագրել սրան, վաղը ճշմարիտ ուղեւ-ժողովրդին պատկանելու... իսկ միւս օրն էլ ստորագրիր, որ դու ստոր, սրիկայ մարդ ես... Ու՛ր է սահմանը այս նողկանքի:

Որքան էլ տարօրինակ է գրած... Այդ թնչ «հակակառավարչական կուսակցութիւնը» նկատեց կինը:

— Դրած է բոլորովին անիմաստ! — համաձայնեց և ամուսինը:

Ուրեմն էլ թնչով կարող է պարտաւորեցնել այսպիսի անիմաստ ստորագրութիւնը:

Այդ այդպէս է: Իհարկէ այդ բխրօղբատիայի անմիտ կեղծիքն է... անմիտ, այո բայց... բայց և ստոր! Գարշելիները գիտէին, որ կստիպեն աղնիւ մարդկանց դառնալու!... ստախօսել կարելի է, այնուամենայնիւ ինչ որ ուզում ես կարծիր, բայց և այնպէս ժխտում է... այո ժխտում է, ձեական ժխտում! Ըմբռնիր այդ!...

— Ձեռն հասկանում — ուսերը վեր քաշելով պատասխանեց կինը: Բռնի կերպով ստիպեցին, այստեղ էլ ռոտեղից եղաւ ժխտում: Բայց չէ որ առաջ էլ է պատահել...:

Այո... և յիշեց Նիկոլայ Իվանովիչը երգման ան-
ճոռնի դարձուածքը, որը ընդունել էր նախ քան պաշ-
տօնը ստանձնելը: Միթէ քիչ էր երկրային դատաս-
տանը, որ դեռ երկնային դատաստանով են սարսա-
փեցնում, որպէսզի տուած երգումը աւելի հաստա-
դուն ու ամուր լինի! և ամեն քայլափոխում այդ
ձգտումն է, ստորացնել ոչ թէ միայն մարմինը այլ և
զաղանի ոստիկանների կոշիկներով ներս սողալ հոգու
խորքը...

Այո պատահում էր մի ժամանակ՝ շանունակեց
նաւ—Իսկ այժմ, երբ ամբողջ Ռուսաստանում կոչ է
հրատարակուած, երբ արդէն կաղմակերպում են
կռող ոյժերը, երբ արդէն հասել է ժամը ճակատա-
մարտիւր—յիմա թագնուել ամօթալի կերպով!... Այո
ամօթալի, անարդ կերպով!

— Բայց ի՞նչից դրդուած մարդ ինքն իրան
մատնի: Իմ կարծիքով դա կլինէր պարզամտութիւն:
Այն ղէպքում կառավարութիւնը «կհոշոտէր» ամենա-
զործունեա ու ամենափաստակար իրեն մարդկանց և
ուրիշ ոչինչ! Ու միթէ թոյլ էտաս քեզ տարածելու
պրօփակացիա...

— Այդ բոլորը այդպէս է!—կնճռուելով սրբեց
ճակատը Նիկոլայ Իվանովիչը.— վերջապէս ինչպիսի
ստոր միջոցներ են ձեռնարկում նրանք!...—Բարկու-
թեամբ բարձրացաւ աթոռից ու սկսեց քայլել յետ ու
առաջ:

Իհարկէ կեղտոտութիւն է: Բայց ի՞նչ անել, երեի
շուտով այդ բոլորը կփոխուի...

— Շուտով: Ի՞նչպէս: Ո՞վ պիտի ձեռք բերի այդ,
քանի որ մենք բոլորս էլ թագնուած ենք թփերի տակ:
Դառնութեամ ծիծաղում էր Նիկոլայ Իվանովիչը: Մենք
բոլորս ինչ որ ուրիշների վրայ ենք յոյսներս դնում!...
Մի քանի ամիսներ առաջ երբ մարդիկ ազատութեան

տենչով հաղարներով էին մեռնում,—ես ևս օգտուելով
ուրիշների հաղտութեամբ, շատախօսում էի ազատու-
թեան մասին...«մենք հերքում էինք»!... Իսկ յիմայ,
երբ մեզ վախեցրին, զոռացին «ցից», ես պոչս հաւա-
քեմ ու հրաժարուեմ այն ամենից: Ես, ոչ. ես երբէք
այդ չեմ անի. երբէք!...նեղեցէք!

—Դու չափազանցնում ես, հակառակ հոսանքով
գնալ դա անկարելի է...

Նիկոլայ Իվանովիչը շարունակում էր կնճռուած
քայլել անկիւնից-անկիւն:

— Դէհ, դիցուկ թէ դու չես ստորագրի. շարունա-
կեց կինը.— Իսկ վերջը... քեզ անմիջապէս պաշտօնից
կհեռացնեն, կաքտրեն...գործից կզրկուես...չէ որ գիւ-
ղի հետ կապ ունես—այդ կապերը կ'կտրուի... վերջա-
պէս և մենք... աշխատանք գտնել ներկայումս չափա-
զանց դժուար է. ամեն տեղ բազմաթիւ աքսորուած
հալածուածներ կան... Իսկ մենք որ զաւակներ ունենք.
Ի՞նչ պէտք է անենք նրանց հետ...

— Ախ, զաւակներ, զաւակներ!—ծանր հոգոց
քաշեց Նիկոլայ Իվանովիչը.—Գոնէ սրանք կտեսնե՞ն
լաւ օրեր...

Նա մօտեցաւ երեխաներին, որոնք գորգի վրայ
նստած զբաղուած էին իրանց խաղալիքներով, նստեց
նրանց մօտ, ու սկսեց համարուել նրանց ու շոյիլ մե-
տաքսանման գանգոտիկ մաղերը...


— Հայրիկ, նայիր, ինձ համար այնպիսի մի
տիկնիկ առ, որ աչքերը այ այսպէս անի, ու սկսեց
Զինոչկան աչքերը ճաճապացնել...

Նիկոլայ Իվանովիչի երեսին նորից ժպտացին
պայծառ աչիկները...

— Ախ իմ թանգագինս իմ սիրելի պստիկ ճտիկ-
ներս, զթաշարժուած կրկնեց հայրը:

— Կօլիս, ստորագրիր.—հանդարդ ու մտերմա-

29726-67



բար ասեց կինը, մօտենալով ու յինուելով նրա ուսին...

— Դէ ինչ արժէ քեզ համար... ի սէր զաւակների:

— Նա բարձրացաւ յատակից ու նորից խորը հոգոց քաշեց:— Ծիշտոն ասած. ասենք մեծ նշանակութիւն եմ տալիս... Մերոնք բոլորն էլ ստորագրելու են՝ դրան կասկած չկայ... անվճռական ձայնով կիսահամաձայնուամ էր նա:

— Դէ, իհարկէ, ի՞նչ կարող ես անել մեռակ: Դա կլինէր մի տեսակ դօնքիշոտութիւն... ու կատակով մօտեցրեց նրան գրասեղանին, նստեցրեց բազկաթոռին, ուսերին սեղմեց, գրիչը տուեց ձեռքը ու առաջը դրեց հրամանաթուղտը ստորագրելու: Նիկօլայ Իվանովիչը հնազանդութեամբ ինչպէս մեքենայ անձնատուր էր եղել կնոջ գործողութեանը:

— Դէ, Կօլեա... էլ ի՞նչ ես մտածում:

Նա յինեց գլուխը ձեռքերին ու սկսեց մտածել:

— Միթէ դու դարձեալ տատանուում ես.— մեղմ փաղաքշում էր նորան կինը:

— Նա նոյնիսկ չշարժուեց, միայն երեան եկան նրա դէմքին խորը վշտի տանջանքներ...

Կինը շփոթած նայում էր նրան ծածկելով յուզմունքը: Անցան բոպէներ... երկար, սրտմաշուկ...

— Ոչ... չեմ կարող!— դարձաւ կնոջը Նիկօլայ Իվանովիչը մի տեսակ տանջուած հանցաւորի ժպիտով:

— Ձեռքս չի շարժում... Նա դէն ձգեց գրիչը ու նորից գլուխը յինեց երկու ափի մէջ:

— Կօլեա... աղերսանքով շնչած կինը:— Ի՛ սէր երեխաների... Նա լուռ էր: Նորից տիրեց խոր ճնշող լուռութիւն...

— Կօլեա, նորից— աղերսանքով հառաչեց կինը: Նիկօլայ Իվանովիչը ջղաձգարար բռնեց մագերէ:

Կնոջ ձայնը կարծես դուրս քաշեց նրա սիրտը, որ և սկսեց միկտալ-միկտալ...

«Դարձեալ»!...

Դարձեալ դուրս է շարժուած... նորից տարիներով թափառել պատահական կոպէկանոց աշխատանք, կարիք... տանջող ու ստորացնող սովի կարիք...

Նորից նոյնը պիտի կրկնւի որը քանի-քանի անգամ տեսել են... բայց առաջ նա երիտասարդ էր և ուժեղ... այն ժամանակ երեխաներ չունէին... իսկ յիմա արդէն նա կիսապառաւ է... յիմա նրանք կտանջուին երեխաների հետ...

Նիկօլայ Իվանովիչի աչքի առաջ պատկերացան իր բոլոր գոյներով տալիսնուած կեղտոտ, գարշահոտ ապաստարանները... կարծես թէ չորս կողմ թքոտած սենեակ լինէր... ինչ որ մէկի չարագուշակ խզվող կրճքի հագոց ձայն տուեց նրա ականջներում... ինչ որ ծանօթ տանջուած, գունատ, ուժասպառ մանկական դէմքեր, որոնք անթարթ չէին հեռացնում նրանից իրենց խզուկ հայացքը... դրանց նման պիտի լինեն Ձինան ու Սօնեան... նրա զաւակները, որոնց նա սիրում է անսահման սիրով... թշուառացնել նրանց, ոչնչացնել ամեն ինչ, մի ինչ որ անմիտ բանի համար մի ինչ որ ստորագրութեան!... Ոչ, ստորագրել և ուրիշ ոչինչ! Ստորագրել և վերջ տալ!

Նա նորից ձեռքն առաւ գրիչը, հարեանցի կերպով նայեց թղտին:

«Ձեմ պատկանում». սուր կերպով ցցուեցին նրա աչքի առաջ...

Մի շարժում և բոլորին վերջ կլինի! Կոշմարը կցրուի...

«Տիկ-տակ, տիկ-տակ». անվերջ խփում էր պատի հինաւուր ժամացոյցը, որը կարծես թէ յիշեցնում էր Ն Կօլայ Իվանովիչին անհղ դատաստանը, այն ինչ

որ նա ուղղում է անել, կմնա, ընդմիջտ, առ ընդմիջտ խայտառակ մի փաստ, նրա մահուանից յետոյ և որի գալուն սրտամաշուկ կերպով շտապեցնում էր ժամացոյցը իր չափակա-չուխկով:

«տիկ-տակ, տիկ-տակ»...

— Ոչ անկարող եմ! անկարող եմ! սրտնեղուած գոռաց ու սունելով թուղտը ոկսեց կատաղութիւնից պատռտել:

Կիւնը միայն ախ քաշեց ու թուլացած նստեց աթոռին:

— Այո անկարող եմ! Ձեւ ստորագրի! վճռական ձայնով ասեց նա վեր կենալով տեղից.— վերջացած է! թէկուզ վոնգին. սատանան տանի նրանց բոլորին! գոնէ զաւակներին առաջ պատասխանատու չեմ լինի... խիղճս մաքուր կլինի: Երբ նրանք կմեծանան կհարցնեն. հայրիկ! ի՞նչ էիր անում աղատութեան կռուի տարիներում: Ի՞նչ պիտի ասէի նրանց: Ես դէ, կասեմ, հրաժարուեցի ամեն ինչից, կաշիս փրկելու համար! Եւ դա մի այնպիսի ժամանակ, մի այնպիսի ահաւոր ըոպէին, երբ մարդիկ զոհում էին իրենց կեանքը աղատութեան համար, և այդպիսի կեղտոտութիւ կանէի ես, ես! ես, որ ապրում էի միայն աղատութեան յոյսերով...

Կիւնը լուռ հեկեկում էր:

— Դէ, լսիր. Նադեա... Միթէ ճշմարիտ չէ— մտնալով նրան հարցրեց Նիկոլայ Իվանովիչը.— չէնց ինքդ, դու կ'ըրցնէիր դէպի ինձ տաժածդ սէրը, եթէ ես այլ կերպ վերաբերէի: Ի՞նչից ես վախենում, չէ որ առաջ էլ ենք ապրել առանց պաշտօնի, խօս չենք կորել: Յիշում ես Կազանում, Նիժնում...

Նիկոլայ Իվանովիչը նստեց կնոջ մօտ ու փաղաքջօրէն գրկեց:

— Յիշում ես Նադեա, ամ... Աստուած է վկայ, որ

վատ չէինք ապրում! Իհարկէ, հեղութիւններ էլ ենք կրել, պատահում էին օրեր, որ շատ ծանր էր թւում: Բայց խօ ցամաք հացի յոյսով չէինք մնում! Յիշում ես մեր շրջանը. Սեմեօնովը, Բաշկիրովը, Իւժինը. տեսնես որտեղ են: Շատերը չկան, մնացածներն էլ հեռու շատ-շատերը կորան. իսկ մենք ահա միխուել ենք այս խուլ անկիւնում, ու սաղ էլ մնացինք: Առաջ յիշում ես վերին աստիճանի անհաշտ էիր. վստահ աւելի քան ես! այժմ չեմ կարողանում ճանաչել կնոջս:

— Այն ժամանակ երեխաներ չունէինք, շնջաց կիւնը դադարեցնելով հեկեկոյցը:

— Երեխաներ, երեխաներ! Էդ այդպէս է... հառաչեց Նիկոլայ Իվանովիչը: Մենք նրանցով ամենայն դէպս արդարանում ենք, բայց և այնպէս մենք ուղղակի դարձել ենք մի անբան մեքենայ:

— Այլևս մենք այն չենք, մենք արդէն պառաւել ենք...

— Ոչ թէ պառաւել, այլ ուղղակի ճահճի պէս մի տեղ երկար մնալուց հօտել ենք: Բաւական է, թափ տանք մեզանից ձանձրութեան փոշին, եռանդը նորից կարթնանայ! միգուցէ մենք դեռ մի որևէ բանի պէտքական կլինենք: Ա... իմ պաշտելիս, իմ սիրելիս!

Կիւնը արդէն թոյլ կերպով ժպտում էր, մեղմացած լինելով նրա փաղաքշանքներից...

— Բայց զիտես, — շարունակեց Նիկ. Իվանովիչը, վերջին ժամանակներս ես արդէն ինձ կորած մարդ էի համարում: Աստուած վկայ! կարծես պէտք է փթէի այս հետ ընկած անկիւնում, ստոր ծառայի պաշտօնով. իսկ այ յիմա ակամայից կնկնես ուղղակի ջրապտոյտը... Ոչինչ! մի կերպ գոյութիւններս կպահենք. կսկսենք գործել, դարձեալ լաւ և նոր ու նոր մարդիկ կտեսնենք, դարձեալ կյուսանք ապագայի մասին. երջանիկ ապագայի! Ա... սիրելի կողակիցս, զգում ես:

— Մազերդ արդէն սպիտակել են, բայց դու էլի յոյսերով ես ապրում,— քնքշաբար շոյելով ամուսնու քունքը ժպտաց կինը: Նայիր, որքան սպիտակ մազեր են երևան եկել:

— Ա, ժպտացիր, ժպտացիր! ուրախացաւ Նիկ. Իվանովիչը:— Դէհ, ախր ես գիտէի. դու չէ որ խելացի ես, դու կհասկանաս...

— Միայն ամուսնու որ ոչինչ չենք հոգացել...

Նիկոլայ Իվանովիչի գէմքը կնճռուեց:

— Այո ճիշտ է մենք չենք կարողանում խնայողութիւն անել.— ասեց նա, աշխատելով անհոգ երևալ:— Էհ, հոգ չէ! Առ այժմ այս կահ-կարասիքը կծախծըխենք... Այ թէկուզ հէնց այս վիթխարին. ու վրէժ-խնդրութեամբ նայեց պահաւանին, ինչպէս իր անձնական թշնամու վրայ—գէհ, մէկ մտածիր, ինչի է պէտք: Միթէ առանց նրան ապրել չի կարելի. կամ այս բազմոցներն ու բազկաթոռները... Ըհ սրիկաներ, որքան էլ փափուկ են, կատարեալ անբան ձրիակերներ չապաւորութիւն են թողնում. վանականներից ոչ մի բանով չեն տարբերւում. ինչի են պէտք այս ձևերը! այս բոլորը շղթաներից վատթար են: Բերնէն է ասել, որ մէկ թէյի սեղանասպասքը քիչ էր մնացել ֆիլիստիոր*) դառնար:

Այո պէտք է կրճատել և բոլոր ծախսերը,— նկատեց կինը:— Ճաշը այսուհետև պատրաստել մի տեսակից, մսեղէն. գէհ, կաթը առանձնապէս. ծառային էլ ճանապարհ դնել:

Նիկոլայ Իվանովիչի սիրտը սկսեց ճնշուել, զգալով մօտալուտ վտանգի գալը:

— Խեղճ իմ Նադիլկ! Ծանր կլինի քեզ համար այդ բոլորը... ցաւակցութեամբ արտասանեց նա:— Եւ ինչու. կապուեցիր այսպիսի մէկի հետ...

*) Սահմանափակ զազափարի տէր մարդ:

— Դէհ ինչեր ես խօսում!— ժպտած կինը,— կարելի է և տանը կարել. լուացքը կարող եմ ես ինքս էլ անել:

— Ոչ... լուացքը... ինչու.— խուլ արտասանեց Նիկոլայ Իվանովիչը, դառնալով գէպի պատուհանը ու լռեց, վախենալով թէ միգուցէ չկարողանայ զիմանալ սրտի մէջ բռնկող յուզմունքին...

Դուրսը տիրում էր կիսախաւար, որի մէջ խառն կերպով նկատւում էին փողոցները ու քարէ բարձր շինութիւնները տեղային անուանի մարդկանց:


Նիկ. Իվանովիչին թւաց, որ նա արդէն դուրս է շարժուած այդ կեղտոտ, խաւար փողոցները ու թափառւում է իր սոված ընտանիքի հետ միասին...

Աշխատել ամբողջ կեանքում, մինչև ծերութեան հասակը ու չունենալ նոյնիսկ մի շնաբուն...

Ու խոր անսահման ատելութիւն բռնկեց նրա մէջ, ատելութիւն մշտական պրօլետարիատի, որը նիրհել էր...

Նորից բռնկուեց նրա մէջ անսանձելի ուժով ու անհաշտ կատաղի սպառնանքով նայում էր, քարէ բարձր շինութիւններին, որի յետև ծածկւում էին անողորմ կեանքի կուշտ ու անգութ մարդկային հօտը:

Ա. Բարսիլով





1072
| A P
| 2-103

3781

2013

